

Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով


ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

25.8.11



1926

05 JAN 2010

334

4-71

№ 8 ՊԱՏԱՆՈՒ ԳՐԱԴԱՐԱՆ № 8

ՀԱՍՏԱԿԱԳԻՑԱԿԱՆ ՄԵՐԻԱ

ԿՈՂՊԵՐՍՑԻԱՆ

ՅԵՎ.

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

ԹԱՐԴՄ. Ա. ՏԵՐ-ԱՎԱԳՅԱՆ

ՊԵՏՈՒԱՅԻ ՀՐԱՄԱ. ՀՐԱՄԱ. ՀՐԱՄԱ. ՀՐԱՄԱ. ՀՐԱՄԱ. 1926

23 MAY 2013

25.01

33
4-71

ՀԱՅՐԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

№ 8 ՊԱՏԱՆՈՒ ԳՐԱԴԱՐԱՆ № 8

ՀԱՅՐԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ ՍԵՐԻԱ

32230


ԿՈՂՈՎԵՐԱՑԻԱՆ ՅԵՎ.

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՏՆՏԵՄՈՒԹՅՈՒՆԸ

Թարգմ. Ա. ՏԵՐ. Ա. Գ. Գ. Յ. Յ. Յ. Յ.



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ — ԵՐԵՎԱՆ — 1926



ԿՈՈՐԵՐԱՑԻԱՆ ՅԵՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Խնչո՞վ ե ապ-
րում գյուղացին. դացին ինչպես ե վարում իր տնտեսությունը:
Ամենից առաջ գյուղացու ինչի՞ն ե պետք տնտեսությունը:
— Վորպեսզի կարողանա ձեռք բերել այն, ինչ վոր ան-
հրաժեշտ ե ապրելու համար:

Ի՞նչպես ե նա ձեռք բերում այդ բոլորը:

— Նա իր և իր ընտանիքի բանվորական ուժը (աշխա-
տանքը) գործադրում ե հողի վրա. նա հողը մշակում է իր
ունեցած գործիքներով, որինակ՝ արորով, գութանով, ցաքա-
նով, մանդաղով, գերանդիկով և այլն: Նշանակում ե՝ ամեն մի
գյուղական տնտեսության մեջ կա 1. գյուղացու և իր ընտա-
նիքի աշխատանքը, 2. հող, 3. արտադրական գործիքներ ու լըծ-
կան: Այստեղ պետք է հիշել և դրա համար անհրաժեշտ շենքերը:

Հին ժամանակ գյուղացին այնպես եր կարգավորում իր
տնտեսությունը, վոր իրան անհրաժեշտ բոլոր նյութերն ստա-
նում եր հողի վրա աշխատանք թափելով: Նա ինքն եր շինում
իր արորն ու ցաքանը, հացն ստանում եր իր արտից, սպիտա-
կեղենը կտրում եր հողից ստացած վուշի քաթանից, իսկ վոչ-
խարի բրդից պատրաստում եր իր հագուստ ու վոանամանները:
Մի խոսքով՝ այն բոլորը, ինչի կարիք եր զգում գյուղացին,
ստանում եր իր և իր ընտանիքի սեփական աշխատանքով իր
սեփական տնտեսությունից:

Բայց այսպես եր հին ժամանականից
շատ բան ե փոխվել: Այժմ գյուղացին ամեն բան իր տնտե-
սությունից չի կարողանում ստանալ: Նա կարող ե իր տնտե-
սությունից ստանալ հաց, կաթ, յուղ, ձու, միս և այլ կեն-

սամթերք։ Բայց հագուստի ու գյուղատնտեսական գործիքների՝ գութանի, վոր փոխարինել ե նախնական արորին, իր մանգաղի ու կացնի, սղոցի համար զնում ե քաղաք և այնտեղից գնում։ Այժմ գյուղացու տնտեսությունը սերտ կապված ե քաղաքի և նրա արդյունագործության հետ։ Այժմ գյուղն առանց քաղաքի ապրել չի կարող. ասենք, քաղաքն ել առանց գյուղի չի կարող ապրել։ Շատ նշանակալից յերեսլիթ ե այս. Իսկ ինչով կարելի յե գնել։

— Ի՞նարկե փողով։

Փաղը վորտեղից։

Փող գտնել գյուղացին կարող ե միայն վորևե բան ծախելով, որինակ՝ հացահատիկ, յուղ, ձու, վուշ, բուրդ և այլն։ Ապրելու համար գյուղացին պիտի ծախի իր ստացածից ավելցուկը և ստացած փողով անհրաժեշտ իրերը գնի։

Այսպես ե ապրում գյուղացին։ Գարնանը հերկում ե, ցանում, ցաքանում. ամառը՝ հնձում, հարում հավաքում. աշնանը՝ կալսում, մաքրում և աշնանացան անում։ Բերքը ժողովելու նետո նա ծախում ե, ինչպես ասացինք, ավելցուկը և ստացած փողը ծախում իր կարիքների համար։

Գյուղացու ռոպ-
եականը
առեւտրի ժամա-
նակ համարի հացն
իսկ համարի հացն ուտում ե քաղաքի բան-
ակ։

Վորը։ Ուրեմն, թվում ե, թե գյուղացին հենց ինքը հացը ծախում ե բանվորին։ Բայց այդպես չե։ Գյուղացին չի կարող վնտոել բանվորին՝ իր հացը ծախելու համար, բանվորը չի կարող վնտոել գյուղացուն՝ նրանից իրեն համար անհրաժեշտ հաց գնելու։

Դրա փոխարեն ահա թե ինչ ե լինում։

Հաճարը գյուղացուց առնում ե միջնորդը, ասենք՝ փութը 40 կոպեկով, և, վորովիետև նա ոգնել ե գյուղացուն ծախելու իր հացը, վորպես վարձատրություն նա յուրաքանչյուր փթին ավելացնում ե 5 կոպեկ ու ավելի, մեծ առետրականին ծախում ե արդեն 45 կոպեկով, սա յել իր հերթին ավելացնելով փթին 10 կոպեկ՝ ծախում ե մեծաքանակ ապրանք առնոր

առետրականին փութը 55 կոպեկով, վերջինս ել իր հերթին ծախում ե գործարանատեր՝ ջրաղացպանին, վորն աղալով այսուը ծախում ե ալրավաճառին, ինարկե՝ ավելացնելով իր ոգտին միքանի տասնյակ կոպեկ, և վերջը գուրս ե գալիս, վոր գյուղացու 40 կոպեկանոց հաճարը մինչև բանվորին հասնելը թանգացել ե, 80 կոպեկ, յերբեմն նույնիսկ ուուբլու հասնել կամ ել ավելի։

Ուրեմն, գյուղացու քրտնքով ձեռք բերած հացը, վոր ծախսվում ե շուկայում, հասնում ե բանվոր-սպառողին վոչ անմիջապես, այլ կողմնակի, զարտուղի ճանապարհով—մեծ ու փոքր առետրականների ու միջնորդների միջոցով։

Գյուղացու այդ «ոգնականներն» աշխատում են գյուղացուց նրա հացը գնել, ըստ հնարավորության, եժան գնով, և այդ նրանց հաջողվում ե։ Գյուղացին հացի գնի մեջ միշտ կորցնում ե. յեթե նա իր հացը ծախեր առանց այդ միջնորդների, ավելի կաշխատեր, վորովիետե, ըստ շուկայի գների, արժեքի մի մասը գյուղացուց քաշելով՝ միջնորդներն իրենց գրպանն են գնում։

Այդպես եր մեզնում մինչև հեղափոխությունը։ Այդպես ե դեռ այժմ ել այն վայրերում, վորտեղ գյուղացին իր հացը ծախսում ե մասնավոր գնորդներին՝ առետրականներին։

Եթե այդ ճանապարհով առետրականը կարողանում ե ծախել գյուղացու հացը շուկայում, ապա նույն ճանապարհով ել նա գյուղացուն հայթայթում ե նրան անհրաժեշտ իրերը՝ չիթը, մանուգը, կոշիկները, մանգաղն ու գերանդին, գութանն ու արորը և այլն։

Ասենք, այս բոլորը պատրաստվում ե Խ. Ռուսաստանի գործարաններում։ Գյուղացին այդ ապրանքները գործարանից անմիջապես ստանալ չի կարողանում. Ապրանքը գործարանից ստանում են սինդիկատները, այնտեղից ապրանքն անցնում ե վաճառականի ձեռքը, նրանից ել՝ մանր առետրականներին և նոր արդեն հասնում ե գյուղացուն։ Ինքնըստինքյան հասկանալի յե, վոր ամեն մեկն իր հերթին, իր ոգտին, ապրանքի վրա միքանի կոպեկ ե ավելացնում, և այսպիսով ապրանքը հասնում ե գյուղացուն կրկնակի և յեռակի թանգ գնով։

Կ՞ԵՎՔԵՍ պետք է
ազատվել այդ
«ոգնականնե-
րից».

Պարզ ե, նման ոգնությունը վրչվոքի հա-
մելի չե: Յեվ իսկապես, ուժ ե հաճելի, վոր
ամենախաղաղ և որինական ճանապարհով
դուրս են կորդում զյուղացու դառն քրտըն-
քով աշխատած կոպեկները:

Հարկավոր ե մտածել, թե ինչպես պետք ե ազատվել այդ
«ոգնականներից»:

Այդ «ոգնականները» նման են փայտօջիլներին (բաղինջ).
Հետ վոր նրանք ել են «ոգնում» մարդուն քնելու, ծծելով նրա
արյունը: Այդ փայտօջիլների գեմ ամենալավ միջոցը պարսկական
փոշին ե, իսկ զյուղացու «ոգնականների (միջնորդների) փոշին
կոռպերացիան ե:

Յեվ իսկապես, միթե դժվար ե զյուղացիների համար՝
միանալ, հավաքել շրջանառության մի փոքրիկ գումար և այդ
կապիտալի միջոցով ծախել իրանց ապրանքը և քաղաքում գնել
իրենց հարկավոր ապրանքները՝ հենց առաջին ձեռքից:

Ինարկե, կարելի յե: Կարելի յե այնպես անել, ինչպես
անում են վաճառականները, և ստացած ոգուտը բաժանել զյու-
ղացիների կոռպերատիվի անդամների վրա կամ հատկացնել մի
հանրողութ գործի: Յեվ հենց գրանով ել զբաղվում ե կոռպե-
րացիան: Նա այնպիսի կազմակերպություն ե, վորը կազմվում
ե հենց իրենցից՝ զյուղացիներից, վորպեսզի նրանք սեփական
ուժերով կարողանան տանել իրանց առետրական գործը և հե-
ռու քշեն իրանցից զանազան միջնորդների և «ոգնականների»:

Առասարակ այսպես են անում. 50 - 100 զյուղացի համա-
ձայնում և վորոշում են կոռպերատիվ կազմել, ձեռք բերել
իրենց անհրաժեշտ ապրանքները և սպառել իրենց արդյունքի
մասցորդը: Ամեն մի անդամից 2.3 ական ուուրի լին հավա-
քում, վորպես սկզբնական (բաժնետիրական) կապիտալ, վար-
չություն են ընտրում, կոռպերատիվային միության մեջ են
մտնում, և գործն արդեն պատրաստ ե: Կոռպերատիվը ել նույն-
պես առնում ու ծախում ե, ինչպես մասնավոր վաճառականը:
Որինակ՝ նա զյուղացուց հացամթերքները գնում ե շուկայի
գնով և ծախում զյուղացու վրա նրան անհրաժեշտ ապրանք-

ները նույնպես շուկայի գնով: Այստեղ տարբերությունն այն
ե, վոր ստացած ոգուտը վոչ թե մասնավոր առետրականի զըր-
պանն ե գնում, այլ մնում ե իրեն՝ գյուղացու տրամադրու-
թյան տակ և ուրիշի ձեռքը չի անցնում: Այդ դեպքում նեպ-
մաններն ու կուլակները հեռվում կանգնում ու աչքները չուծ
նայում են, թե ինչ սիսալ պիտի գործի կոռպերատիվը, վորից
կարողանան վորեն կերպ ոգտվել - ձեռքները տաքացնել:

Գյուղական
տնաբնության ա-
ռաջին ոգուտը
կոռպերացիա-
յից.

Ուրեմն յեթե մեր ասած ձեռվ ե կազմա-
կերպվում կոռպերատիվը, նրա տված ոգուտն
իսկույն աչքի չի ընկնում: Խոսենք որինակ-
ներով. յենթադրենք՝ գյուղացուն հարկավոր ե
10 արշին չիթ. զրա համար նա գործարան չի գնա, ուրեմն և
գործարանի նշանակած գնով առնել չի կարող: Յեթե կոռպե-
րատիվ չկա, զյուղացին պիտի գնա մասնավոր առետրականի
մոտ և վճարի թե գործարանի նշանակած գինը (ասենք 18 կոպ)
և թե այն տարբերությունը, վոր կա գործարանի ու շուկայի
գների մեջ: Այդ տարբերությունն ամբողջապես մտնում ե
մասնավոր առետրականի գրանը, և, իհարկե, այդ ավելորդ
վճարած փողը գյուղացին յետ ստանալ չի կարող:

Բայց այդպես չե, յեթե զյուղացին իրենց զյուղերում
կոռպերատիվ են ունենում: Ամենից առաջ նրանք կոռպերա-
տիվի միջոցով կարող են մեծ քանակությամբ ապրանք գնել,
վոր, անշուշտ, ավելի եժան կնսատի զյուղացիներին: Հետո՝ հենց
նույն կոռպերատիվի միջոցով ապրանքը կարող են ձեռք բերել
առաջին ձեռքից (պետական սինդիկատներից կամ իրենց մի-
ության միջոցով): Իսկ այդ ե իր հերթին մասամբ եժանացնում
ե ապրանքը: Կոռպերատիվի ոգուտն ակներկ ե:

Բայց այդ դեռ քիչ ե: Ճիշտ ե, գյուղացին կոռպերատիվի
միջոցով ձեռք բերած ապրանքը չի ստանում գործարանի գնով.
Կոռպերատիվն այդ գնին միքանի կոպեկ և ավելացնում իր
ծախսերը ծածկելու համար, գուցե նույնիսկ ավելի, քան ան-
հրաժեշտ այդ ծախսերը ծածկելուն: Բայց չե վոր ամեն տար-
փա վերջը կոռպերատիվի վարչությունը հաշվում ե իր միասն
ու ոգուտը: Հաշվետվության ժամանակ պարզվում ե, վոր ապ-

ըամքները կոռպերատիվի միջոցով վաճառելու ընթացքում գյուղացիներից վերցված ե 500 ռուբլի: Յեթե վաճառականը նման մի գումար աշխատեր, շատ գո՞ւ կմնար և մեծ ուրախությամբ զրպանը կլներ: Բայց այդպես չի անում կոռպերատիվը. նա հրավիրում է կոռպերատիվի անդամների ընդհանուր ժողով, վարչությունը զեկուցում է իր գործունեյության մասին, պարզվում է յելքն ու մուտքը, զուտ ոգուտը. այնուհետև ներկա անդամները կարող են վորոշել՝ այդ գումարը վերադարձնել անդամ գյուղացիներին: Այդպիսով ոգուտը կրկնակի յե դառնում.

1. ապրանքը կոռպերատիվի միջոցով ավելի եժան և ձեռք բերվում,
2. գյուղացիներից ավելի վերցրած կոռպեկները նորից վերադառնում են զյուղացու գրպանը, վոր նշանակում ե՝ գյուղացու գնած ապրանքն ավելի եժան և նստել, քան նա վճարել ե ապրանքը վերցնելու ժամանակ: Պարզ ե, վոր յեթե մենք մի գյուղացու վերաբերմամբ հաշիվ տեսնելու լինենք, մեծ թվեր չենք ստանա: Վերցնենք գյուղական մի տնտեսություն. ալդ տնտեսության տերը՝ գյուղացին կոռպերատիվի անդամ ե և տարվա ընթացքում կոռպերատիվից 30 ռուբլու ապրանք ե վերցրել: Կոռպերատիվն իր անդամներին ապրանքը շուկայի գնից 10% -ով եժան և տվել: Դուրս կցա, վոր նա կոռպերատիվից մի տարվա ընթացքում ոգտվել ե 3 ռ. (յեթե շուկայում առներ, 3ռ. ավել պիտի վճարեր):

Բացի ալդ, մենք տեսանք, վոր տարեվերջին հաշվետվությունից պարզվեց, վոր կոռպերատիվը զուտ ոգուտ ե ունեցել 500 ռուբլի, և վորը վորոշվեց բաժանել անդամների վրա համեմատական չափով. ասենք ամեն ռուբլուն ընկնում ե 5 կոպ: Ուրեմն սրանից ել գյուղացին կստանա 1 ռ. 50 կոպ., ուրեմն ընդհանում նա կոռպերատիվից ոգտվում ե 4 ռ. 50 կոպեկ: Ճիշտ ե, շատ ել մեծ բան չե այս, բայց և այնպես գյուղացու տնտեսության համար մի բան արժե: Բայց հաշվենք վոչ թե մի գյուղացու ստացած ոգուտը, այլ ընդհանուր գյուղացիության, և կտեսնենք, վոր շատ մեծ բան ե կազմում: Որինակ՝ 1923 թվին կոռպերատիվները գյուղացիներին մատակարարել են 100 միլիոն վոսկի ռուբլու ապրանք: Համարյա բոլոր տե-

ղերում նրանք իրենց անդամներին ապրանքը ծախել են 20% / զեղչով: Յեթե ընդունելու լինենք, վոր այդ ապրանքի կեսը գոնե ծախված ե անդամներին, դուրս կա, վոր կոռպերատիվները գյուղացիության համար 5 միլիոն վոսկի ռուբլի յին տնտեսել: Այս թիվն, ինարկե, վերջնական չե, այլ մոտավոր. բայց և այնպես, պարզ ապացուցում ե, թե վհրբան մեծ ե կոռպերատիվի արած ծառայությունը գյուղական տնտեսությանը: Զե վոր յեթե չիներ կոռպերատիվը, ալդ 5 միլիոն ռուբլին ազատ կմտներ կուլակների և նեպմանների գրպանը:

Այստեղից բոլորովին պարզ ե կոռպերատիվի տված ոգուտը գյուղական տնտեսությանը:

Բայց այս բոլորը դեռ քիչ ե... Մասնավոր առևտրականը շատ հեշտությամբ ե կարողանում թող փշել հասարակ ժողովը պիտի աչքերին: Յերբեմն այնպես կփշի, վոր գլուխդ կկորցընես: Պատահում ե նաև, վոր վաճառականն սկսում ե կոռպերատիվից ել եժան ծախել ապրանքները: Բանն ի՞նչ ե. պետք ե աչքերը չորս անել և իմանալ, թե վհրտեղ ե գաղտնիքը. չի կարող պատահել, վոր այստեղ մի խաբեբայություն չինի. կամ նա քաշի մեջ ե ծպկացնում (գողանում), կամ թե չե ապրանքը վորակի տեսակետից այն չե, ինչ վոր դու յես ուզում: Ուրիշ խոսքով՝ մեջտեղը մի «կ» կա:

Ո՞վ չգիտե, վոր մասնավոր առևտրականը ամեն կերպ աշխատում ե վորեւ բանով խաբել իր գնորդին: Զեք լսել հին վաճառականի սկզբունքը «չես խաբիլ—չես ծախիլ»:

Կոռպերացիան մի այլ կողմից ել ձեռնտու յե գյուղացիական տնտեսությանը. այս, վոր այդտեղ խաբեբայություն չի կարող լինել. և քաշը ճիշտ կլինի և ապրանքը վորակով լավ: Այլ կերպ տարորինակ ել կլիներ. ապրանքն առնողը կոռպերատիվի անդամն ե, վորը պետք ե ծախի իր նման անդամների վրա. ել ինչու պիտի ինքն իրեն խաբի:

Յեթե մեր բոլոր ասածներն ի մի ամփոփենք, կտեսնենք, վոր գյուղական տնտեսության ստացած ոգուտը կոռպերատիվից այնքան ել փոքր չե և շատ զգալի յե:

Կոռպերացիակի

ինքությունը ոգուտը
գուղական սքե-
սեսության.

Կոռպերատիվի տված յերկրորդ ոգուտը

նրա առևտրական գործերից եւ առաջ գալիս:
Այս անդամ արդեն ոգուտն ստացվում եւ

մթերքների՝ հացահատիկների, յուղի, ձվի,

վուշի և այլն վաճառելուց կամ սպառելուց:

Մենք քիչ վերև արդեն ասացինք, թե ինչպես են «ոգնում» այդ գործում զյուղացիներին նեղմաններն ու կուլակները: Կոռպերատիվների միջոցով եւ, վոր պետք եւ խույս տալ նման «ոգնողներից» ու նրանց շահագործումներից. և իսկապես, կոռպերատիվը մեծապես նպաստում եւ զյուղացուն՝ ազատվելու այդպես ոգնող վաճառամոլներից – չարչիներից: Ի՞նչպես եւ հասնում կոռպերատիվը այդ բանին: Ահա թե ինչպես: Լավ կաղամակերպված կոռպերատիվներում վարչությունը գործակալական ոպերացիաներ ել եւ անում (комиссионные операции). այս նշանակում եւ, վոր կոռպերատիվը վերցնում եւ զյուղատնտեսական մթերքներ՝ ցորեն, գարի, համար՝ կոմիսիայով ծախելու: Ուրիշ խոսքով ասած՝ ամեն մի զյուղացի, յեթե ցանկանում եւ, կոռպերատիվի վարչությանը հանձնում եւ իր հացահատիկը և հանձնարարում նրան վաճառել ավելի հարմար ժամանակ և ձեռնտու պայմաններով: Վորովհետեւ զյուղացու համար դժվար եւ սպասել մինչև ծախելը (նա այդ փողից տուրք պիտի վճարի և իր տնտեսության համար անհրաժեշտ իրեք գնի), այդ պատճառով զյուղացին միշտ իր հանձնած հացահատիկի արժեքի չափով, շուկայի գներով հաշված, փող եւ վերցնում կոռպերատիվից: Հետո արդեն կոռպերատիվը ծախում եւ հացը վորոշ գումարով, և յեթե պարզվում եւ, վոր ավելի բարձր գնով եւ ծախված, քան զյուղացին ստացել եւ կոռպերատիվից, այն ժամանակ մի չնշին մաս վերցվում եւ մանը ծախսերի համար, վոր արել եւ վարչությունը, իսկ մնացածն ամբողջապես հանձնվում եւ զյուղացուն: Նման գործառնություններ կարելի յեւ կատարել զյուղացու բոլոր մթերքներով: Որինակ՝ Սիրիում այդ ձևով և շատ հաջողությամբ գործառնություններ կատարվում են մորթիներով: 1923 թ. կոռպերատիվները մորթի տվողներին յուրաքանչյուր մորթուն 1 ր. 10 կ. լրացուցիչ արժեք

վճարեցին: Որ՝ ասենք թե զյուղացին հանձնել եւ 10 մորթի և ամեն մի մորթու համար ստացել եւ 50 կ., ընդամենը 5 ոռութի: Մորթիներն ուղարկելով արտասահման՝ ավելի թանգ գնով ծախսեցին: Փողն ստացվեց, և այդ փողից զյուղացին յուրաքանչյուր մորթու համար ստացավ լրացուցիչ 1 ր. 10 կ., այսինքն՝ 10 մորթու համար 11 ոռութի: Կարիք կա ասելու, վոր զյուղացու համար այդ անսպասելի յեկամուտը բավական խոշոր բան եր: Դեպքեր են լեզել, յերբ գյուղացին իր հացը ծախելով կոռպերատիվին, յուրաքանչյուր մեկ փթին աշխատել եւ 8 գրվանքա, այսիսքն 5 փթին 1 փութ: Յեթե ելի հաշվելու լինենք ընդհանուր զյուղացիության մաշտարով, կստանանք հսկայական թվանշաններ, այսինքն միլիոնավոր ոռութիներ՝ վոսկով: Զիներ կոռպերատիվը, այս միլիոններն ել շատերի պես կմտնելին կուլակների և սպեկուլյանների գրպահները: Կոռպերացիան եւ, վոր զդաստ հսկում եւ զյուղացու կոպեկների վրա, վորից նրա միլիոններն են ստեղծվում:

Կոռպերացիան

յեվգյուղատեսե-
սության մեմե-
նայացումը.

Այժմ աշխատենք վերլուծել այն հարցը,

թե ինչ ոգուտ եւ տալիս կոռպերացիան զյու-

ղական տնտեսությանը: Կար ժամանակ, վոր

զյուղացին հողը մշակում եր իր շինած արո-
րով: Այդ ժամանակն արդեն անցել եւ այժմ զյուղացին հերկում եւ գութանով: զրա վրա ավելի քիչ աշխատանք եւ գործադրվում, նրա լծկանը քիչ եւ հոգնում, հերկն ել ավելի լավ եւ, քան առաջ-
վանը: Ինչպես վոր ձեռնտու յեւ արորը փոխարինել դութանով, այնպես ել ձեռնտու յեւ ձեռքով ցանելու փոխարին ցանել ցա-
նող մեքենայով (սելկա). նա տնտեսում եւ թե աշխատանքը, թե ժամանակը. նա մի դեսիատին հողը միքանի անգամ ավելի արագ կարող եւ ցանել, քան ձեռքով: Մեքենայով ուղիղ շար-
քերով եւ ցանվում, սերմն ավելի խորն եւ թաղվում հողի մեջ և դիմանում եւ լեռաշտին, իսկ մեր պատերի ցանածը շեր դի-
մանում:

Մի խոսքով՝ նրա կիրարկման ոգուտները շատ մեծ են:

Այդպես են և զյուղատնտեսական մյուս մեքենաները,
որինակ՝ հարելու, հնձելու, կալսելու, քամելու և այլ մեքենա-

Ները: Դրանցից յուրաքանչյուրի գյուղացուն տված ոգուտը շատ մեծ է: Որ՝ գյուլու ջոկող մեքենան, առանց վորի դաշտերը յերբեք գյուլուից ազատել չի կարելի: այդ գեղեցիկ, բայց անպետք խոտը տարեցտարի պետք ե շատանա և փչացնի գյուղացու հացահատիկը ու դցի նրա գինը: Հապա մի համեմատեցեք թակիչներով կալսելը (կալսելու նախնական ձեր, մանավանդ Ռուսաստանում—Ծ. թ.) մեքենայով կալսելու հետ: Թակիչներով կալսելու գեղքում թե ինչքան հատիկներ են ջարդվում, ինչքան ել մնում հասկերի մեջ, հաշվել անկարելի յեւ Անինչ մեքենան վոչ հատիկներ ե ջարդում, վոչ ել հասկերի մեջ ե թողնում, և գործն ել միջանի անգամ արագացնում ու հեշտացնում ե:

Այսպես, գյուղական տնտեսության համար ոգտակար են բոլոր մեքենաները. և լավ կլիներ, յեթե յուրաքանչյուր գյուղացի կարողանար ձեռք բերել այդ մեքենաները: Դժբախտաբար, գնի տեսակետից, նրանք անմատչելի յեն գյուղացուն: Գյուղացին այդքան փող չունի. և դուրս ե գալիս, վոր գյուղատնտեսական մեքենաներից ոգտվողն ելի հարուստը պիտի լինի. տարօրինակ ե, չե: Բանվորա-գյուղացիական կառավարությունը պիտի գործիքներ պատրաստի, իսկ ոգտվողը պիտի լինի կուլակը.

Հենց այստեղ ե, վոր ոգնության ե գալիս կոոպերացիան: Լավ կազմակերպված կոոպերատիվը հեշտությամբ կարող ե ոգնել գյուղացիությանը շատ հասարակ ձեռվ. որին.՝ կոոպերատիվի անդամները վորոշում են գյուղատնտեսական մեքենաներ ձեռք բերել. այդ մասին հայտնում են կոոպ-ի վարչության. հաշվում են, և պարզվում ե, վոր կոոպերատիվի ոգուտից կարելի յե հատկացնել 500 ռ.: Լրացուցիչ հավաքում են գյուղացիներից 1000 ռ., յուրաքանչյուր տնտեսությունից 5 ռ. և ընդհանուր ուժերով գնում են մեքենաները. ապա կոոպերատիվին կից կազմվում ե վարձու մեքենաների կայան, վորտեղից գյուղացին վարձով վերցնում ե ցանող, հնձող, խոտ հարող մեքենաներ և իր գործը վերջացնելուց հետո վերադարձնում ե կայան. նույն ձեռվ վերցնելով ոգտվում ե մի ուրիշ գյուղացի:

Այսպիսով, կոոպերատիվը գյուղացիներին մատչելի յե դարձնում մեքենաները:

Պետք ե իմանալ և այն, վոր նման գեպքերում կարելի յե մեքենաներն ապառիկով վերցնել կամ նպաստ ստանալ: Գործունյա վարչությունը կարող ե շատ հեշտությամբ դուկ բերել այդ բոլորը:

Նույն ձեռվ կոոպերատիվը կարող ե և կալսելու ու մաքրելու մեքենաներ ձեռք բերել:

Այս ձեռվ ավելի հեռուն կարելի յե գնալ: Բավականաշափմիջոցներ տնտեսելով՝ կոոպերատիվը կարող ե կառուցել և շոգեաղաց, վորը կծառայի ամբողջ շրջանի գյուղացիության: Այդ կարող են անել նաև միքանի կոոպերատիվներ՝ իրար հետ միանալով:

Վերջերս Խորհրդային Ռուսաստանում մեծ ու շադրություն ե դարձվում ելեկտրիֆիկացիայի վրա: Ելեկտրականությունը մի ուժ ե, վորը և՛ լույս կարող ե մատակարարել գյուղացու խրճիթներին, և՛ մեքենաները շարժողության մեջ գնել, և՛ այլ ոգտավետ գործեր կատարել: Արտասահմանում նույնիսկ լվացքն ու հարթուկելը ելեկտրականության միջոցով ե կատարվում: Ելեկտրական ուժն ամենաեժանն ե. նա ավելի եժան և նստում, քան ածուխը, փայտը, նավթը և մազութը. նրա գլխավոր հարմարությունն այն ե, վոր առանց դժվարության կարելի յե գործադրել ամենահեռավոր տարածության վրա: Դրա համար հարկավոր ե միայն մեծ ծախսեր անել ելեկտրակայանը սարքավորելու համար, վորտեղ պետք ե ձեռք բերել ելեկտրական ուժը և բաժանել ամբողջ շրջանին: Այսպիսով ելեկտրիֆիկացիայի գործում կոոպերացիան կարող ե խոշոր գեր խաղալ: Վաղուց արդեն միքանի կոոպերատիվներ կառուցել են վորըի կելեկտրակայաններ, որ՝ Սիբիրում Ստարո. Բարտինսկի յուղ պատրաստող միությունը (արտել): Վերջին ժամանակներս կոոպերատիվները շատ լայն չափերով են զբաղվում նման ոգտավետ գործերով: 1923 թ. Շուլգինյան կոոպերատիվները (Ռուսաստանում) կառուցել են մի խոշոր ելեկտրակայան, վորն արդեն աշխատում է ուժ և մատակարարում շրջակա տնտե-

սություններին: Կազմակերպված եւ հատուկ ընկերություն գյուղացիներին ելեկտրակայաններ կառուցելու գործում ոգնելու: Այդ ընկերությունից կարելի յե միշտ թե նպաստ և թե տեխնիկական ոժանդակություն ստանալ:

Գյուղական առանձին անտեսությունը շատ թույլ եւ ու անոգնական. մենակ ի՞նչ կարող եւ անել նա, բացարձակապես վո՞չինչ, շարունակ կարիքի մեջ, շարունակ մինույն տեղում, վոտները վար ու վեր անելով մի քայլ անդամ առաջ գնալ չի կարող: Բայց ահա, առանձին անտեսությունները միանալով կոռպակատիվ են կազմում. իսկ միանալով՝ նրանք ուժ են կազմում: Հեշտ ե ասել, թե «գեղ կանգնի-գերան կկոտրի». Նրանց համար այժմ մատչելի յեն և կատարելագործված թանգ սեքենաները, կարող են և ջրաղաց ունենալ, առանց վախենալու կարող են ձեռք զարկել և այնպիսի խոշոր ձեռնարկության, ինչպիսին գյուղի ելեկտրայնացումն ե: Հենց սրա մեջ ե կոռպակատիվի ոգուտը:

Կոռպերացիան Շատ հաճախ ե պատահում, վոր գյուղացին հաղի բարեկան կան անտեսության պատկանող հողը կիսով լավումը.

Հափ միայն պետքական ե մշակության, իսկ մնացած մասը ճահիճ ե կամքարքարոտ. բայց ճահիճը կարելի յե ցամաքեցնել և թե հողը քարերից մաքրել: Այդ աշխատանքները, վորով անպետք հողը վեր եւ ածվում մշակության համար պետքական հողի, կոչվում ե մելիորացիա: Շատ անդամ մելիորացիան խոշոր ծախսեր ե պահանջում, որ.՝ ճահիճը չորացնում են՝ հողի մեջ խողովակներ անցկացնելով, վորոնց միջակ հոսում ե ավելորդ խոնավությունը-ջուրը: Պարզ ե, վոր այսպիսի աշխատանքը մեծ ծախս կպահանջի. որինակ՝ մի տեղ այդ ձեռվ ճահիճը չորացնելու ամեն մի դեսիատինը նստել ե 300 ր.: Նույնպես և թանգ ե նստում և ջրագուրկ հողերի վորովումը: Վոչ մի մասնավոր անտեսություն նման ծովասեր անել չի կարող: Յեկ ինչու նման դեպքերում ոգնության չպետք ե կանչել կոռպերացիային: Ինչու գյուղացիները չպետք ե այդ միանալ իր կաթնառական անտեսություն առանձին չի կարող ունենալ իր առանձին գյուղատնտեսը: Գյուղացիների միությունը կարող ե ունենալ իր գյուղատնտեսը: Վորի ոգնությամբ և կրաքելավի իր անտեսությունը, իսկ վոր այդ ճանապարհով կարելի յե մեծ հետեանքների համել, այդ ել ապացուցում են փաստերը: Որ.՝ արտասահմանի մի գյուղում աշտ

տեղերում արվում ել ե: Ահա հենց այս նսարավորությունը, վոր տալիս ե կոռպերատիվը նման ոգտակար ձեռնարկությունները կիրառելու համար, նրա ամենաշահեկան կողմն ե:

Կոռպերացիան Մենք շարունակ խոսում եյինք կոռպերացիան և անտեսության մասին: Բայց գյուղացիք միայն յերեխավումը.

Կրագործությամբ չե, վոր պարապում են. Նրանց անտեսության մեջ մեծ գեր ե խաղում նաև անամապահությունը: Կարմիր ե կոռպերացիան այս գործում ել ոգնել գյուղացուն:

— Այն,

— Ի՞նչպես, — կարցնեն մեզ:

Ահա թե ինչպես: Մեր գյուղական կովերը լավը չեն, քիչ են կաթ տալիս. բայց այդ գեռ չի նշանակում, թե նրանք ավելի կաթ տալ չեն կարող, քան տալիս են: Յեթե, որինակ, կթի կովը կանոնավոր կերակրվի, կարող ե կրկնապատկել իր կաթը: Գյուղատնտեսները շատ լավ զիտեն, թե յերբ և ինչնի պիտի կերակրել կովը, վորպեսզի ավելի կաթ տա: Խոսեցնեք գյուղատնտեսի հետ, և նա ձեզ մանրամասն կպատմի այլ մասին: Յեթե գյուղացին մտադրվում ե իր կովից ավելի կաթ ստանալու, պետք ե լուրջ վերաբերվի այդ հարցին: Պետք ե կերակրել և ուշադրություն դարձնել, թե այդ ինչպես ե աղդում կաթի քանակի և վորակի վրա: Հասարակ գյուղացու համար դժվար ե այդ: Պետք ե դիմել իմացողի: Խորհրդին Հենց այստեղ ել ոգնության և գալիս կոռպերացիան: Դրա համար գյուղացիները կազմում են կոռպերատիվ այսպես կոչված «վերահսկչ միություններ» (контрольные союзы), վորոնք ոգնում են գյուղիցուն՝ բարելավելու իր կաթնառական անտեսությունը: Պարզ ե, վոր ամեն մի գյուղական անտեսություն առանձին չի կարող ունենալ իր առանձին գյուղատնտեսը: Գյուղացիների միությունը կարող ե ունենալ իր գյուղատնտեսը: Վորի ոգնությամբ և կրաքելավի իր անտեսությունը, իսկ վոր այդ ճանապարհով կարելի յե մեծ հետեանքների համել, այդ ել ապացուցում են փաստերը: Որ.՝ արտասահմանի մի գյուղում աշտ

տեսություններն ունեյին 400 կով։ Տնտեսությունները մտնում եին վերահսկիչ միության մեջ։ միության միքանի տարվա գործունելությունից հետո տերերը 13.871 ռ. ավել ոգուտ ստացան՝ համեմատած նախկին տարիների հետ։ Իսկ, ինչպես գիտեք, փոքր շահ չե ալս։ Մեզ մոտ ԽՍՀՄ.ի մեջ կենդանիների ազնվացման վրա բիչ ուշադրություն ե դարձվում։ Բայց վոչվոք չի խանգարում մեզ, յեթե մենք ցանկանանք և մեր կոռպերատիվների միջոցով ձեռք զարկենք այդ գործին։ Բացի այս, կոռպերատիվները կարող են ոգնել գյուղացիությանը կենդանիներն ազնվացնելու գործում։ Նրանք կարող են կազմակերպել բեղմանավորման կայաններ, հավաքել այդտեղ ազնվացեղ էրինջներ և բաժանել գյուղական տնտեսություններին։

Այսպիսի յեղանակներով և կոռպերատիվի ոգնությամբ գյուղացիները կարող են ավելի և ավելի կատարելագործել իրենց տնտեսությունը և ավելի մեծ յեկամուտներ ստանալ։

Կոռպերացիան Շատ հաճախ գյուղացին փողի, սերմացվի ինք միջնաբարեկ կամ ձիու մեծ կարիք ե զգում, ամենից շատ բացակալուրիունը փողի։ Փողը՝ այնպիսի բան ե այդ, վոր ձեռք բումդ ունենալով ամեն ինչ կարող ես ձեռք բերել, անինչ գյուղացին ամենից շատ դըա կարիքն ե զգում։ Ասենք թե հերկն սկսելու ժամանակ սատկում ե գյուղացու ձին, փող ե հարկավոր նոր ձի առնելու։ Փող չկա։ Խեղճ գյուղացին մի հարեւանից մյուսի մոտ ե վազում, աշխատելով 30-50 ռուբի պարտք վերցնել նոր ձի գնելու համար։ Վերջապես, կամաւակամա, նա գնում ե կուլակի մոտ և ամենածանր պայմաններով փող վերցնում։ Վաշխառուն այնպիսի մի ողակ ե գցում նրա վիզը, վոր մինչեւ մահ պիտի սեղմի նրան։


Բայց գյուղացու այդպիսի շահագործումը վաղ եր անցել։ Նրանք դիմել եին ինքնոզնության՝ վարկային ընկերություններ կազմելով, վորտեղից կարելի յեր 8-10% դրամ փոխ վերցընել։ Պարզ ե, թե այդ ինչպես կոգներ գյուղացու տնտեսությանը։ Միթե կարիք կա ասելու, վոր վարկ. ընկերությունից վերցրած պարտքը շատ ավելի հեշտությամբ ե վճարում գյուղացին, քան վաշխառվի պարտք։

Համաշխարհային և քաղաքացիական պատերազմների ընթացքում բոլոր վարկային ընկերությունները դադարեցին գործելուց, չնորինիվ ժողովրդական տնտեսության քայլայման և փողի արժեքի անկման։ Նման պայմաններում փոխառություն տան անհնարին ե դառնում։ Բայց 1922 ՀՅ թվականներին կոռպերատիվներն սկսեցին գյուղացիներին ոգնության գալուրից ճանապարհով։ Փոխառություններն սկսեցին տալ սթերբով (հայրոյ), մանավանդ սերմացվով։ Ցանելու ժամանակ գյուղացին սերմացվի կարիք միշտ զգացել ե, և ահա կոռպերատիվները վորոշ պայմաններով սկսում են սերմացու բաժանել կարիքավորներին։ Շատ դեպքերում այդ ձեր պակաս ոգուտ չի բերել գյուղական տնտեսությանը։

3740/32230

Ներկայումս ԽՍՀՄ.ն ժողովրդական տնտեսությունն սկսել ե վերակենդանանալ։ Խ. իշխանությունը հասավ այն բանին, վոր փողն այլևս իր արժեքը չի կորցնում, այսինքն գինը չի բնկում։ Սկսեց լերեալ հնչուն և արծաթ դրամ-10, 15, 20, 50 կոպեկանոցներ և 1 ռուբլիանոց։ Խորհրդային չերվոնեցը և ոռուբլին կանգնեց ամուր վոտքի վրա, նույնիսկ ավելի, քան արտասահմանյան վայրուտան—անգլիականն ու ֆրանսիականը։ Նման պայմաններում նորից հսարափոր ե դառնում առաջի պես նպաստ տալ գյուղական կարիքավոր տնտեսություններին։ Յով կոռպերացիան արդեն գործի յե անցեր։ Շատ կոռպերատիվ խանություններին կից վարկային բաժանմունքներ են կազմը ված։ Նրանց նպատակն ե վարկել ոգնության հասնել գյուղական տնտեսություններին, սերմացու, ձի, կով գնելու և առհասարակ ինչի կարիք զգում ե նա։ Նույն նպատակով զանտագան տեղերում բացվում են վարկային ընկերություններ։ Խ. իշխանությունը գյուղական տնտեսությունները վարկավորելու համար կազմակերպել ե գյուղատնտեսական բանկ։ Շատ նաև հանգներում գյուղատնտեսական վարկային ընկերություններ գոյություն ունեն։ Լով հիմքերի վրա գրված ամեն մի կոռպերատիվ, վորին կարելի յե վստանել վորեւ զումար, հնարավորություն ունի այդ հիմնարկություններից վարկ ստանալու և իր հերթին այդ վորերով վարկավորելու գյուղացիներին։

Հաս Մախովի



ԿՈՌԵՐԱՑԻԱՆ ՅԵՎ ՍՈՑԻԱԼԻԶՄԻՆ ԱՆՑՆԵԼԸ

Թվում ե, թե մեզ մոտ շատ քիչ ուշադրություն ե դարձվում կոռպերացիայի վրա, Հազիկ թե բոլորն ըմբռնեն այժմ, վոր Հոկտեմբերյան հեղափոխությունից սկսած և անկախ ՆԵՊ-ից (սոր տնտես. քաղաքականությունից) (ընդհակառակը, այդ տեսակետից պիտի ասել - շնորհիվ ՆԵՊ-ի) կոռպերացիան մեզ մոտ բացառիկ նշանակություն ե ստանում. Հին կոռպերատորների ցանկությունների մեջ մեծ տեղ ե բռնում ֆանտազիան: Նրանք իրենց ֆանտաստիկականությամբ նույնիսկ ծիծագելի եյին:

Բայց ինչում ե ֆանտաստիկականությունը:

— Նրանում, վոր մարդիկ չեն հասկանում բանվոր դաստկարգի պարզաբն հիմնական քաղաքական նշանակությունը տապալելու կեղեքիների տիրապետությունը: Այդ տապալումն արդեն այժմ տեղի յե ունեցել, և շատ բան հին կոռպերատորների ցանկությունից, վոր այն ժամանակ թվում եր ֆանտաստիկական, նույնիսկ ոռմանտիկական, այժմս դառնում ե ճշմարտություն:

Յեվ մեզ մոտ, յերբ պետական իշխանությունը բանվոր դաստկարգի ձեռքին ե, յերբ այդ իշխանության են պատկանում արտադրության բոլոր միջոցները, մեզ մոտ իրոք մնացել ե միայն ազգաբնակության կոռպերացման յենթարկելու խնդիրը: Ազգաբնակության մաքսիմալ կոռպերացման պայմանով ինքնըստինքյան այն սրցիալիզմն ե իր նպատակին հասնում, վորն առաջ դաստիարակային պայքարի տեսակետի վրա կանգնած և քաղաքական իշխանության համար կռվող մարդկանց ծիծագնու ժպիտն եր հարուցում: Սակայն մեր մի շարք ընկերներն իրենց հաշիվ չեն տալիս այն մասին, թե ինչ հսկա, ինչ վիթխարի նշանակություն ունի մեզ համար ազգաբնակության կոռպերացումը: ՆԵՊ-ով մենք վորոշ զիջում ենք արել գյուղացիությանը, մասնավոր առևտուրի սկզբունքին. հենց այստեղից ե բղխում (հակառակ վոմանց կարծածի) կոռպերատիվի հակայական նշանակությունը: Իսկապես ասած՝ խոր և լայն կերպով կոռպերացման յենթարկված ազգաբնակությունը ՆԵՊ-ի տիրապետության ժամանակ այն ամենն ե, ինչ վոր

մեզ հարկավոր ե, վորովհետեւ այժմս մենք գտել ենք մասնավոր շահի, մասնավոր առևտուրականի շահի ստուգման և պետական վերահսկողության յենթարկելու աստիճանը, նրան ընդհանուրի շահերին ծառայեցնելու աստիճանը, մի բան, վորն առաջ փորձության քար եր հանդիսանում շատ ու շատ սոցիալիստների համար:

Յեվ իրոք, խոշոր արտադրական միջոցների վրա ունեցած պետական իշխանությունը, պրոլետարիատի ձեռքն անցած պետական իշխանությունը, պրոլետարիատի միությունը միլիոնավոր մանր ու մանրիկ գյուղացիների հետ, գյուղացիների նկատմամբ պրոլետարիատի ունեցած ղեկավարության ապահովությունը և այլն, միթե այն բոլորը չեն, ինչ վոր հարկավոր ե այն բանի համար, վոր մի ժամանակ չարչիկան համարված, արհամարհված կոռպերացիայից ստեղծենք այն բոլորը, ինչ անհրաժեշտ ե սոցիալիստական հասարակության կառուցման համար: Դեռևս սոցիալիստական հասարակության կառուցում չե այս, բայց այն անհրաժեշտ բանն ե այդ, վորը հարկավոր և կառուցման համար:

